



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7087

ԱՇՈՏ ԱՐՔ-ՅԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱԽՅԱՆ
(Շիրակի թեմի տառչնորդ)

ԿՈՒՍԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ Թ Ե ԽՍԲԵԲԱՑՈՒԹՅՈՒՆ

(ՀՎՅՈՑ ՅԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ)

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՅԴ

ՀՅՈՏՈՐԸԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Տպարան Գագգաղողութեամբ Տեղական Տնտեսության բաժնի
1924 թ. Լենինական.

281
Հ-15

881
6-15

ԱՐՔ-ՑԵՐԻՍԿՈՎՈՒ ՀԱԽԱՆ
(Շիրակի թեմի առաջնորդ)

04 NOV 2009

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ Թ Ե ԽԱԲԵԲԱՑՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՅՈՑ ՅԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ)

ՀԱՅՈՑ
ՅԵԿԵՂԵՑ
ՀԱՅՈՑ
ՅԵԿԵՂԵՑ

ՄԱՍՆ ՑԵՐԿՐՈՐԴ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԳԻ



Տպարան Գալքաղդործկոմի Տեղական Տնտեսության բաժնի
1924 թ. Լենինական.

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ ԽՍԲԵԲԱՅՆ- ԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԴԱՏՈՒԵՅԱԿԱՆ ԶԵՎ ՈՒՇԺԱՄԱ-
ՆԱԿ Ե ՄՏՑՐԱԾ ՅԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԶ

Կուսակրոնությունը չարի՞ք և թե բարիք, հակաբնական ե, թե բնական, Աստվածադիբ որե՞նք ե, թե մարդադիբ, կարևոր ե, թե անկարևոր, կուսակրոն մարդ գոյություն ունի՞ աշխարհի վրա թե վոչ։ Սրանք այնպիսի պարզ հարցեր են, վոր չի կարող լինել մարդ, վոր ձեռքը խղճի վրա դրած բացարձակապես հայտարարե, թե բարիք ե և բնական ե, Աստվածադիբ ե և կարևոր և թե կարող ե լինել աշխարհի վրա կուսակրոն մարդ, չետեսապես կուսակրոնության գարգացման և դրացման խնդիր բարձրացնել այն ել այս 20-րդ լուսափայլ և քաղաքակիրթ դարում, ավելի քան մահացու հանցանք ե։ Բայց եջմիածին 1917 թ. իբր թե յեկեղեցու բարենորոգումների համար կայացրած նախապատրաստական մի խումբ քահանաների և կուսակրոնների ժողովում, կուսակրոնությունը՝ նախապես պատրաստված, կուսակրոնության վերակենդանացման և բարգավաճման խնդիր բարձրացրեց, առանց քաշվելու և ամաչելու ժամանակից, Քրիստոսի վարդապետության վողուց, առաքելական սահմանադրությունից և իրենց անձնական փորձերից։

Ժողովի մեջ միայն յես եյի, վոր հիմնավոր փաստերով և բնական որենքով հերքեցի և միանդամայն անպետք և յեկեղեցու համար ավելի քան վնասակար տարբ

համարեցի կուսակրոն հոգեորականությունը, Քրիստոնեայությունը նվիրագործել ե ամուսնությունը և ընդունել ե իբրև յեկեղեցու խորհուրդ և սուրբ խորհուրդ, համարդուվ յեկեղեցու համար սրբազնասուրբ համարված մկրտության և հաղորդության խորհուրդների հետ, հիմնված առաքելական հրահանգների վրա: Յեվ հիրավի, ինչ վոր կարեոր ե և բնական և ընդունելի աշխարհականների համար, նույնը չե կարող լինել անբնական և անկարեվոր և արգելյալ հոգեոր պաշտօնաների համար: Առաքյալները չեն պարտավորեցնում Ավետարանի պաշտոնյաներին ամուրի մեալ, և նախկին դարերում մեր յեկեղեցին ունեցել ե ամուսնացած յեպիսկոպոսներ և կաթողիկոսներ: Յեպիսկոպոսների պարտավորյալ ամուրիությունը ներմուծումն է հունական և հովովմեյական յեկեղեցիներից և ինչպես հայտնի ե պատմությունից, բավական ժամանակ, մի քանի դարեր մեր յեկեղեցին ունեցել ե և ամուսնացած և չամուսնացած յեպիսկոպոսներ, հետեապես ամուրիյութունը պարտադիր յեղած չե:

Պողոս առաքյալը իր սիրելի աշակերտ Տիմոթեոսին ուղած հովական թղթերից մեկի մեջ կանոններ և հրահանգներ ե ավանդած հովիվներին և քարոզիչներին, իրենց պաշտոնը սրբությամբ կատարելու համար - և այդ թղթերը մեծ արժեք ունեն, վորովինակ լույս են սփռում նախնի յեկեղեցու որենքների և կառավարության պարզ ձևերի վրա և յեկեղեցու պաշտոնյաներին ընծայում են վարդապետության, խրամուսների, միաթմարության և քաջալերության ու խրամուսանքի ճոխ գանձ և ցույց են տալիս նաև և ակներև պատկերացնում են առաքյալի սիրու և վոգին, վորը թեև իր ծերության հասակին հասած և ընկճված սաստիկ հալածանքներից և տքնալից աշխատություններից, բայց սուտ վարդապետությունների դեմ նախանձով վառված ու բորբոքված և այդ սուտ վարդապետության մի կողմն ել համարելով ամուրիյութունը, պաշտպանում և ճշմարտությունը, Տիմոթեոսին ուղած

թղթերի մեջ կուսակրոնությունը համարելով մարդադիր և վոչ Աստվածադիր:

Առաքյալը համակ լի հայրական սիրով և գորովով լցուած ու տուգորված դեպի իր հոգեոր վորդիքը և դեպի նրանց, վորոնք գործակից եյին Քրիստոսի հոգեոր թագավորության տարածման և զորացման ու ընդարձակման, հետեյալ հրահանգն և աալիս Տիմոթեոսին, թե՝ «Եեթե մեկը յեպիսկոպոսության և ցանկանում, բարի գործի յեցանկանում, բայց պետք ե յեպիսկոպոսը մի կնոջ այր լինի»: Նույնն է զրում նաև իր մյուս աշակերտ Տիտոսին, Յեպիսկոպոս բառը Պետրոս առաքյալը թարգմանած և տեսուչ իր առաջին ընդհանրական թղթերից մեկի մեջ, ուր գործ ե զնում Քրիստոսի համար զույգ ընդ հովիվ բառին, թե՝ «Ճեր հոգիների հովին և տեսչին դարձաք»: Փիլիպեցոց ուղղած Պողոս առաքյալի թղթերից մեկի մեջ պարզորեն յերեւմ ե, վոր վոքրիկ մի քաղաքի միակ յեկեղեցու մեջ գտնվում եյին մի քանի յեպիսկոպոսներ և սարկավագներ, Հետեւապես Փիլիպպե լինում են յերկու դասակարգ Ավետարանի պաշտոնյաներ և այդ յերկու դասակարգին և ուղղում իր վողջույնները առաքյալը և խոսք անդամ չկա քահանաների մասին: Յեպիսկոպոսները ուսուցանող եյին, սարկավագները տնտեսական բաժնի կառավարիչներ: Այս իրողության միակ մեկնությունը տալիս ե Հերոնիմոս, թե առաքելական դարում մի և նույն եր քահանաների և յեպիսկոպոսների աստիճանը և այս պարզ կերպով ցույց ե տալիս Պողոս առաքյալը յեպիսկոպոս բառի հոգնակի գործածելուց: Փիլիպպե քաղաքը չեր կարող ունենալ և պահել մի յեպիսկոպոսից ավելի իրեկ թեմակալ առաջնորդ քաղաքի և ընջակայի համար: Առաքելական զրվածները մեզ տանում են այն անդիմադրելի յեզրակացության, վոր առաքելական դարում և նրանից հետո բավական ժամանակ յեպիսկոպոսները բարձր չեյին քահանաներից աստիճանով, բայց թե ինչպես այս պաշտոնյաների մեջ ծագումն առակ

առաջնության արտօնությունը, Հերոնիմոս բացատրում և վորոշակի: Հերոնիմոս յեկեղեցու ամենից ուսոյաբ հայրերից մեկն եր իր ժամանակին Զորբորդ դարու առաջին մասում ընդարձակ ուղևորություններ կատարեց քրիստոնյա աշխարհի զանազան կողմերը և խնամքով ուսումնասիրեց այն մատենապիրները, փորոնք ժամանակադրական կարգով իրենից առաջ ելին: Հերոնիմոս շատ պարզ կերպով ցույց ե տալիս իր զրգաճների մեջ, թե յերեցները և յեպիսկոպոսները նույնն ելին առաքյաների ժամանակ և ապա մեկը նրանցից ընտրվում եր նախապահ մյուս յերեցներին և ստանալով իրավունք իրեն ընտրողներից կառավարելու յերեցներին և յեկեղեցին, կոչվում եր յեպիսկոպոս: Յեպիսկոպոսական ձեռնազրությունը առաքելական շրջանից շատ հետո և մտած քրիստոնեյական յեկեղեցիների մեջ: Հետեւապես, ինչպես արդի յերեցները պետք ե իմանան, փոր իրենք հպատակ են յեպիսկոպոսին ըստ սովորության յեկեղեցու և որինազրության, փոր կարգված ե իրենց վերա իրու տեսուչ, նույնպես և յեպիսկոպոսները պետք ե իմանան, փոր իրենք մեծագույն չեն քան յերեցները՝ փորեւ իցե սահմանադրությամբ Քրիստոսի և կամ առաքյաների:

Նման վկայություններ տալիս են նաև Ոգոստինոս և ուրիշ յեկեղեցական մատենապիրեր: Յեզ ապա ժամանանակի ընթացքում հետզհետե յեկեղեցու կառավարչական կազմվածքի ձեք փոխվելով առաքելական տիպարից, շարունակվեցին փոփոխությունները առաջ գնալ, մինչև փոր Հոռվեյական կայսրության պետական կառավարչական կարգերն ու կանոնները մուծվեցին ապորինաբար յեկեղեցու մեջ և յեղան արքեպիսկոպոսներ, պատրիարքներ, պապեր, կաթողիկոսներ, կարդինալներ, միտրապոլիտներ, եկղարքներ, մասնավոր և ծայրագույն աստիճաններ վարդապետության, ավագություններ, ինն աստիճաններ հոգեփոր կոչումների: Յեվայս բոլորը հակառակ Քրիստոսի փողուն պատվերին, փոր ավանդեց առաքյաներին, յերբ նըանք սկը-

սել ելին վեհ բարձրացնել իրենց մեջ ավագության, թե ով ե լինելու իրենցից ավագը: Քրիստոս լսելով առաքյաների վեճը՝ անմիջապես հանդիմանեցնրանց, ասելով, թե՝ «Գիտե՞ք, զի թագավորք յերկրի տիրեն ազգաց և իշխանք աշխարհի իշխեն նոցա, բայց վոչ այնպես յեղիցի ի միջի ձերում, այլ վոր մեծն ե ի ձենջ՝ յեղիցի ամենեցուն պաշտոնյա և վոր կամիցի առաջին լինել յեղիցի ամենեցուն ծառա»:

Դառնամ այժմ լրացնելու յեպիսկոպոսների ամուրիւթյան և ամուսնության խնդիրը: Հարկ անհրաժեշտ չե յեպիսկոպոսին ամուսնանալ և կամ չամուսնանալ յեպիսկոպոսական կոչումն ընդունելու համար: Ամուսնությունը և չամուսնությունը ամենեին կապ չունի կոչման հետ, բայց ինչպես ասում ե Պողոս առաքյալը, յեպիսկոպոսը պետք ե ամուսնացած լինի և պետք ե ունենան հեթանոսների նման մի քանի կին միենույն ժամանակ և միասին: Վոչ ել արգելում և յեպիսկոպոսներին կրկին և կրկին ամուսնանալու, ինչպես աշխարհականները: Յեկեղեցական պատմությունից դիտենք, փոր յերկու, յերեք և չորս անգամ ամուսնացածները կարող ելին ընդունվել յեկեղեցու պաշտոնյա մինչև Գրդ դարի վերջերը և Գրդ դարի սկզբները: Հունական և հոռվեյական որենքները ընծայում ելին ապահարզանի մեծ դյուրություն, այնպես փոր ամուսնացածների համար սովորական մի գործ եր բաժանվել միմյանցից և ամուսնանալ ուրիշների հետ, նույն իսկ իրենց նախկին կանանց կենդանության ժամանակ, այնպես փոր նույն հասարակության մեջ կարող ելին գտնվել բավական թվով կանայք, փորոնք հաջորդաբար յեղած լինելին կին միենույն անձի: Ահա առաքյալը արգելում և այդպիսիներին ընտրել յեպիսկոպոսության պաշտոնի, փորովհետև թեպետ այդպիսի մեկը ապրելիս լիներ մի կնոջ հետ, բայց կարող եր գտնվել մի ուրիշ կին, փորից արձակված լիներ և այդպիսի մեկին ձեռնա-

դրել յեպիսկոպոս, վոչ այլ ինչ եր, յեթե վոչ արատա-
վորել յեպիսկոպոսական պաշտոնն ու կոչումը և յեկեղե-
ցին:

Ուր ես առաքյալ, ունիս արդյոք հնարավորություն
վերստին աշխարհ գալու, վոր տեսնես քո աշքերով և լը-
սես քո ականջներով, թե ինչեր են անում Քրիստոսի յե-
կեղեցու ամեն կարգի և աստիճանի պաշտոնյաները, Քր-
իստոսի վոգուն հակառակ զյուժիններով տիտղոսները ըս-
տեղծագործող, ամուրիություն ուխտող պապերը, կարդի-
նալները, արքերը, յեպիսկոպոսները, մետրապոլիտները,
եկպարխները և վարդապետները և միանձնուհիները: Դու-
ինքդ ես ասել և գրել գրավոր քո սիրելի աշակերտ Տի-
մոթեսսին, թե յեպիսկոպոսը կարող ե ամուսնանալ, ին-
չու ուրեմն արգելվում ե ամուսնանալը: Յեպիսկոպոսը և
կամ հոգեոր պաշտոնյան պարտավոր ե ամուսնանալ, վոր-
պեսզի, ինչպես ուրիշ բաների մեջ, նույնպես և առն կա-
ռավարության և վորդոց կրթության մեջ որինակ հան-
գիսանա իր հոտին և իրեւ հայր ըլլինի թեթեամիտ և ու-
նայնասեր, այլ ծանրաբարու ըստ արժանույն, բայց այս
չի նշանակում, թե յեպիսկոպոսը պետք ե լինի խիստ և
դաժան, ինչպիսիներին ներկայումս սովորաբար վարչա-
գետ տիտղոսն են տալիս:

Վորչափ ոգտակար կարող ե լինել որինակը
այն հոգեոր պաշտոնյաների ընտանյաց, վորոնց մեջ
ծնողական խնամքը և գորովալից կառավարությու-
նը միացած են իրենց վորդոց ճշմարտապես կրթե-
լու մեջ, ասում ե առաքյալը, Ամուսնացած հոգեոր պաշ-
տոնյան քան վոչ ամուսնացածը, ավելի հարմար ե իր
կոչման, վորովինետի նա կարող ե լավագույն կերպով հա-
մակըել իր ժողովրդին և նրանց ընտանեկան ցավերին և
ուրախություններին ցավակից և ուրախակից լինել Վոչ
միայն կարող ե արժանանալ իր ժողովրդի մեծագույն
վստահության և կատարյալ աղատությամբ մտնել նրանց
տները, այլ և հեշտությամբ կարող ե մոտենալ նրանց

սրտերին և լինել նրանց համար մեծ որհնություն: Ամու-
րիությունը իրեկ պարտականություն պարտադիր դարձ-
նելը վոչ այլ ինչ է, յեթե վոչ հարք սատանայի, վորի
նպատակն ե կապտել Ավետարանի պաշտոնյաներին իրենց
կոչման հատուկ առավելություններից: Հետեապես ամուս-
նությունը արգելված չպետք ե լինի և այս արգելքը Պո-
ղոս առաքյալը ապստամբություն և համարում Աստծու
գեմ և միանգամայն հակառակ Քրիստոսի Ավետարանի
հոգուն: «Ամուսնությունը պատվական ե և սուրբ» և թե
«լավ ե ամուսնանալ՝ քան ջեռուլ», ասում ե առաքյալը:
Ամեն մարդ աղատ պետք ե լինի շամուսնանալու, յեթե
ինքն ընտրում ե այնպիս իր ազատ կամքով և մի վորեն
բանավոր պատճառով և աղատ պետք ե լինի ամուսնա-
նալու, յեթե ինքն այնպիս ե ընդունում: Բացի Պողոս և
Հովհաննես առաքյալներից, մյուս բոլոր առաքյալներն ա-
մուսնացած են: Ամուսնությունը և շամուսնությունը
կոչման հետ կապ չունի և կուսակրծնությունը պարտա-
դիր չպետք ե լինի վարդապետների և յեպիսկոպոսների
համար: Ամեն մի արժանիք ունեցող կարող ե ամուսնա-
ցած ձեռնազրվել և չամուսնացած ձեռնազրվել և ապա
յերբ ինքը կամենա ամուսնանալ: Անգլիայում և Ամերի-
կայում հաճախ պատահում ե այդ, և նախանցյալ տարի
կոնդունում մի յեպիսկոպոս՝ յեպիսկոպոսանալուց վեց
տարի անցնելուց հետո յե ամուսնանում:

«Ո՞հ, մտածելն անգամ սարսուռ և ազգում մարգուս,
ասում ե մի տաճկանայ գրագետ՝ կուսակրծների համար:
Բան մը կա միայն, զոր չեմ հասկցած, այլ գիտեմ վո-
րոշ, թե զիրենք կաշկանդող ուխտը բացարձակապես ան-
կարող ե հոն ալ հասնիլ և մարդկությունը իրենց ընտա-
նիք կոչելով, կուզեն իրենց միխթարել: Փառամոլությու-
նը ամօրիչ սպեղանի կըդարձնեն իրենց համար, բայց
ուր կընան պահել իրենց սիրտը և անոր ապրած անցյա-
լը: Կուզեյի որ մը վարդապետ ըլլալ ուսումնասիրելու

այդ կյանքի ներքինը, բայց այդ կարձ որն ալ ինձի հավիտենականություն մը կըթված:

Այս, շատ ճիշտ ե առում չակերտների մեջ առաջ բերածս խոսքերի հեղինակ զբագեալու Այնքան ահանկի յեթվում կուսակրոնոթյան դժնդակ և անընական ճանապարհը, վոր սոսկումով և խանդակաթ զգացումներով և հետեւմ ամեն մի բանիմաց և լրջամիտ մարդու սիրալ և միտքը: Աշխարհականների ճանապարհը մասամբ տանելի յէ: Հրակեղ և տոչորող աշխարհի վշտերի և ցավերի անապատը յերբեք վհատություն չի առաջ բերում անվերջ կերպով աշխարհիկ մարդու ներքին հոգեկան աշխարհի մեջ: Հույս ե ունենում և վստահ ե յերբ և իցե ովազիսի հանդիպել: Թեհ մի առ ժամանակ կյանքի ճանապարհը թվում ե դերբուկ և ամայի, բայց ոլացող ամպի մի կտոր, անդունդների մեջ պլպլացող մի կաթիլ փայլուն լույս, կամ գոնե հիշատակի ստվերը, վոր անբաժան և մարդու հոգուց, անուշացնում և քաղցրացնում են աշխարհիկ մարդու ճանապարհի միորինակությունը: Բայց կուսակրոններինը տրտում ե և վշտազին: Ցից և ուղղաձիգ ապառաժից վեր յենելով, պետք ե բարձրանան շարունակ, լսելով ուրիշների կյանքի քաղցրիկ և անուշ մեղեղիները, վորոնք վարդաբույր ուղիներից են բարձրանում: Բայց կուսակրոնները միշտ ականջները և աշքերը ուխտած են փակ և կախ պահելու, բայց և այնպես մինչև աչքերը հասած վեղարի տակից աեսնելով ընտանիքներ և կայտառ մանուկներ ընտանեկան հարկի տակ, ոջախի շուրջը խինդ ու ծիծաղ և զրանք ունենալու արտօնությունից զրկված, բարձրանում են շարունակ ապառաժից, վորի գագաթին գողգոթա յե կանգնած իրենց հանդեալ իրեւ իդեալ, բայց այդ բոլոր տաժանքների փոխարեն, իրեւ պատիժ իրենց ընտրած անընական կյանքի, վոչ միայն ներկա սերնդի արհամարհները, անարդանքը և անհեծքն ու նզովքն ե իրենց բաժին հատկացրած, այլ և ապագա սերնդի:

«ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ» ԿԱՄ ՊՈՌՆԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈՎՄԵՅԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՅԵԿԵՂԵՑՈՒՄ

Ընթերցողների խորին ուշագրությունն եմ հրավիրում Քրիստոնի յեկեղեցու ուխտյալ կուսակրոն հոգեործայրագույն պետերի առավել քան չափն ու սահմանն անցած, գարշելի և զզվելի պոռնկությամբ և ցոփությամբ լի կյանքի վրա: „Servus servorum“—ծառա ծառայից, ահա այսպես եյին անվանում իրենց նախկին խոնարհ պապերը չոսկմեյական յեկեղեցու: Բայց այս խոնարհ կոչվան տիտղոսը համարյա թե ուրիշ վոչինչ չեր, բայց միայն կեղծ գիմակ, վորի տակ ծածկած եյին պահում իշխանասիրական, պոռնկական և շնական ձգտումներն ու վայրագ տենչերը: Քանի վոր աշխարհային իշխանությունը բավական զորեղ եր և սեղմում եր պապերին, պապերը ծառայակերպ սողում եյին նրանց առաջ: «Ո՞վ եմ յես Քո առաջ, իմ Տեր, փոշի և վորդ», այսպես եր գրում Գրիգորիոս Ա. պապը Մագրիցիա կայսրին, անվանելով իրեն «անարժան ծառա», բայց յերբ ժամանակի ընթացքում յեկեղեցու կազմակերպությունը բավականին ուժեղացավ, պապերը փոխեցին իրենց լեզուն աշխարհային իշխանության դեմ, և ծառա ծառայից տիտղոսը փոխեցին «թագավոր թագավորաց» մեծամիտ և բիլա տիտանական տիտղոսի, վորոնց առաջ ծունկ չոքած թագավորներ և կայսրներ, համբուրում եյին նրանց հողաթափերի վերա գրոշմկած Քրիստոնի խաչը: Հենրիկոս Դ. թ. 11-րդ դարու վերջերին Գրիգորիոս Ե.-րդի պալատի դրսի դուռն առաջ Վատիկանում յերեք որ և յերեք զիշեր ձմեռվան ցուրտ որերին կանգնելուց հետո միայն արժանացավ ներկայանալ հիշյալ պապին՝ հողաթափների վերա զրոշմկած Քրիստոնի խաչը ծունկ չոքած համբուրելու:

Պապերի գոյության ա. դարից մինչև կրոնական հեղափոխության դարը պապերի ույժի անընդհատ բարձրացման և անկման պատմություն ե, վորը նպատակից դուրս համարելով,

անցնում եմ պապական յեկեղեցու կուսակրօն հոգևորականության և պապերի սոսկալի պոռակական և ծայրահեղական կենցաղին։ Պատմությունից հայտնի յե, վոր առաջին առամ Հոռոմեյական յեկեղեցիները մացրին իրենց մեջ կուսակրօնությունը, Հոռոմեյական յեկեղեցու պապերի Վատիկանի պալատը և յերկան կուսակրօն հոգևորականության վանքերը դարձան բացարձակ հարեմներ, վորոնցից մի քանի որինակ բափական եմ համարում առաջ բերել։

15.-րդ դարու վերջերին պապական Աթոռի վերաբարձրանում և Աղեքսանդր Զ.-րդը, Սկզբում նա զինվորական և լինում և փառափորում ե ամբողջ Վենեցիան իր սիրուհիների հետ ունեցած արկածներով։ Մի ժամանակ անցնելուց հետո տեսնելով, վոր փայլուն կյանք և բանում համարձակ և պճնասեր մարդու համար բարձր հոգևորականությունը, փոխեց զինվորական զրահը կրոնափորական վերաբերութիւն, իր հորեղբայր կարդինալ Ալֆոնսի հոգանափորությունը, վոր ընտրվեց պապ 1455 թ. Կալիկոսա Գ.-րդ անվամբ, նպաստեց Աղեքսանդր Զ.-րդի արտակարգ արագությամբ մազլցելուն յեկեղեցականության գասակարգության սանդիմափ ստորին աստիճաններից մինչև կարդինալական աստիճանը։ Նա միշտ ծայրահեղ ցոփության հասած անառակ կյանք վարեց, բայց հետո սկսեց կեղծավար և սուտ բարեպաշտ ձևանալ, նա ուներ սիրուհի Ռոզա Վանոցա անվամբ, վորի հետ կենակցում եր հինգ յերեխաներով, բայց այնքան վարպետությամբ, զգուշությամբ, վոր յերբ 1492 թ. ընարվեց պապ, ամբողջ Հոռոմեյադավան ժողովուրդը ցնծաց և ուրախացավ, վոր վերջապես քրիստոնեյությունը ունեցավ իսկապես բառի բուն նշանակությամբ կրօնասեր բարեպաշտ ու մաքրասեր սուրբ հայր։

Բայց շատ շուտով յերեաց, վոր փոք մի բարի պառուղ՝ պապական քայլքայքած հողի վրա չի կարող ծաղկել, իշխանությունը ձեռք գցելուն պես այդ բարեպաշտ ձեռ-

յողը ցույց տվեց ամենաիրիստ անտակություն և սահմարձակ շահասիրություն և իր ցոփական կյանքով զերազանցեց միջին դարերի բոլոր պապերից։ ԳԱՐԵԼԻ ԿՑԱՆՔԸ ԱՅԴ ՊԱՊԻ ԳՐԻ ՄԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱԱ, ՈՒՎԵՆԱԱ ԿԻՉԻՆԱԱ ԿԻՉՈՂ ԳՐԻՉԸ, ԱՅԴ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆԱՌԱԿ ՑԵՎ ՑՈՓԱԿՑԱՑ ՊԱՊԸ ԻՐ ԿՐԹԵՐԻՆ ԸԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՒՅՆ ԻՍԿ ԻՐ ԳԵՂԵՑԿՈՒՀԻ ԱՂՋԿԱ ՀԵՏ ԿԵՆԱԿՑՈՒՄ ԵՐ ՑԵՎ ԱՅԴ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ՅԵՐԲ ԱՐԴԵՆ ԱՄՈՒՄՆԱՑՐԵԼ ԵՐ ԱՅԴ ԱՂՋԿԱՆ, ԲԱՅՑ ՅԵՐԲ ԻՆՔԸ ՍԿՍԵՑ ԻՐ ՀԱՄԱՐ ՊԱՀԵԼ, ՔՐԻՍՏՈՍԻ ՑԵԿԵՂԵՑՈՒ ԱՅԴ ՊԵՏՔ, ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՑԱՎ ՓՈԽԱՆՈՐԴ, ԱՅՆ ԱՍՏԻՃԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԱՆԳԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՐԵՑ ԻՐԵՆ, ՎՈՐ ԻՐ ՓԵՍԱՅԻՆ ԳԱԼՏՆԻ ԱՅՑԲԵԼ ՏՎԵՑ ԽԱՐՈՒՑԿԻ ՄԵԶ ԻԲՐԵԿ, ՀԵՐԵՏԻԿՈՍԻ, ԿԱՆՉ ՀԵՏ, ՎՈՐ ԻՐ ԱՂՋԻԿՆ ԵՐ, ԱՎԵԼԻ ԱԶԱՏ ԿԵՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ, Բայց Աղեքսանդր Զ.-րդ պապը միայն զբանով չը բավականացավ. սիրուհիների մի վոհմակ եր պահում Վատիկանի առաքելական պալատի մեջ և պալատի պատերը նույն իսկ հոչակում ելին դիշերային աղմկալից խնճույքների և զինարբության տեսարաններ, փորնք վերջանում ելին նրանով, վոր զինարբության մասնակցող բոլոր տղամարդիկ և կանայք, հանելով իրենց զգեստները, պարում ելին մերկ Առաքելական պալատ փոխվել եր պոռնկանոցի, փորտեղ մշտապես լինում ելին 50—60 պոռնիկ կանայք, գինարբությամբ և ցոփությամբ տարված Աղեքսանդր Զ.-րդ պապը, իր ստարոտի վարմունքներով մինչև այն աստիճանի հասավ, վոր նստամ եր իր պալատի պայծառ լուսավորությամբ շքեղ դանիճում իր աղջկերանց և նոր սիրուհու հետ միասին և ՀԱՐԿԱԴՐՈՒՄ ԵՐ ԲՈԼՈՐ ՊՈՇՆԻԿՆԵՐԻՆ ՎԱԶԵԼ ՄԵՐԿԱՑԱԾ ԴԱՀԼԻՃԻ ՀԱՏԱԿԻ ՎԵՐԱ ԹԱՓՎԱԾ ՇԱԳԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ, ԱՅԴ ՆՈՒՅՆ ՊԱՊԸ ԿԱԶՄՈԿԵՐՊԵՑ ՆԱՅԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԱՊԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԸ ՄԵՐՉԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԻՍՆԵՐԻ ՑԵՎ ՄԻԱՏԵՂ ԻՐ ԱՂՋԿԵ-

ՐԱՆՑ ՅԵՎ ՄԻՐՈՒՀՈՒ ՀԵՏ ՅԵՎ ԱՅԼ ՊՈՌՆԻԿ ԿԱՆԱՆՑ
ՀԵՏ ՄԻՐՈՒՄ ՅԵՎ ԱԽՈՐԺՈՒՄ ԵՐ ՆԱՅԵԼ ՆՈՒՅՆ ԻՍԿ
ՎՈՉ ՄԻԱՑՆ ԶԻԱՆԵՐԻ ՄԵՐՉԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ՆԱ-
ՅԵՎ ՎԱՅՐԵՆԻ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՈՒԺԳԻՆ ՄԵՐՉԱՎՈՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ, Հրամայում և պատրաստել մի սրբունու
պատկեր իր սիրուհու դեմքի նման կիսամերկ իրբե սուրբ
կին և ինքը պապը նրա վոտքերի տակ իր քահանայա-
պետական հագուստով:

ՅԵՎ այս բոլոր ծայրահեղ ցոփության հասցրած ա-
նառակնելթյամբ չեր մոռանում նաև յեկեղեցու թշնամի-
ներին և իր անձնական հակառակորդներին: Հրամայում
և այրել խարույկի մեջ Սավոնարուա կրոնափրին, վորը
համարձակվել եր հարձակվել թե զրչով և թե խոսքով
պապերի Վատիկանի առաքելական պալատի մեջ կատար-
ված սոսկալի և զարհուրելի ապականության դեմ:

Հասկանալի յե, թե ինչ իմաստ և բովանդակություն
կունենար այն ժամանակավա ժողովրդի բազմաթիվ յերդի-
ծաբանական թերթերի մեջ լույս տեսած Աղեքսանդր Զ.-
բդի Կյանքի նկարագրությունը և մարմի պատկերը:

Յուլիոս Բ.-րդ պապի ժամանակ 1507—1513 թ.
գերմանական Մակախմիլ կայսրը, վորը իր բոլոր կառա-
վարությունը անցկացրեց պատերազմների դաշտերի վե-
րա, նվաճելով յերկրներ սրով և կրակով և ազատելով յե-
կեղեցական իշխանությունից տիրապետված գաֆանները,
ասել ե իր ժամանակին, թե՝ «արդարե, պետք ե շնորհա-
կալ լինել մարդասեր Աստծուց, վոր աշխարհը չի կործա-
նում այնպիսի վորսորդների և անառակների կառավա-
րության տակ, ինչպես յես և ինչպես հարթեցող և անա-
ռակ ներկա պապը»:

Պապերը խայտառակ և անամոթ քաղաքականությամբ
ձեռնարկում են շարունակ նորանոր լկտի փորձեր, առա-
տացնելու իրենց յեկամտային ազբյուրները: Հովհան 22-
րդ պապը 1314—1334 թ. յերկսեռ կուսակրօն և թե ա-
մուսնացած հոգենորականների և թե յերկսեռ աշխարհա-

կանների համար և բոլորի գործած մոլությունների և ա-
պորինի սեռային հարաբերությունների համար սակագներ
նշանակեց, վորոնք վճարելով ազատ և համարձակ կարող
եյին պոռնկություն անել: Մի կարգ պատմաբաններ բա-
ցահայտ կերպով հաստատում են, վոր Հովհան 22-րդ
պապը կարգադրեց պաշտոնապես զանազան քանակի սա-
կագներով թույլ տալու բոլոր տեսակի սեռական նույն
իսկ անբնական աղավագումները: Գրիչը դժվարանում և
շարժիլ թղթի վերա նկարագրելու, թե այդ սակագներով
ինչպիսի սոսկալի և վայրենիներին անդամ վոչ հատուկ
և անթույլատրելի խայտառակ սեռական հարաբերություն-
ներ եր թույլատրվում: Այդ նույն Հովհան 22 րդ պապը
ավելի քան 10,000 մարդ այրել տվեց խարույկի մեջ իր
պապության ժամանակամիջոցում իբրև հերետիկուների,
վորոնք իրենց բարոյական նկարագրով անհամեմատ բարձր
կը լինելին, քան պապերը ամբողջ բարձր և ստորին
գարշելի հոգենորականությամբ, մանավանդ կուսակրօն
յերկսեռ հոգենորականությամբ, վորոնք նույն պապի կար-
գագրությամբ պառկում եյին վանքերի խցերում միասին
մի տեղաշորի մեջ զույգ զույգ, վորպեսզի փորձեն ամե-
նաբարձր փորձության դիմանալը, իսկ հակառակ դեպ-
քում անձնատուր լինել միմյանց և կատարել մարմի
ցանկությունը:

Հովհան 22-րդ պապը կատարյալ մարմնացումն եր
ծայրահեղ հեշտասիրության և անզթության: Նա հաստա-
տեց ինկվիզիցիան իսպանիայում և իր ժամանակ այրել
տվեց խարույկի մեջ Հովհան Հուսին և մի քանի հազար-
ների իբրև հերետիկուների: Այդ պապը զզվելի և զարշե-
լի գարձավ մինչև անդամ անբարոյական և ապականված
յերկսեռ կուսակրօն հոգենորականության համար իր սան-
ձարձակ ցոփության և անառակության համար և իր ծայ-
րահեղ անզթությունների և չտեսնված ու չլսված պղծա-
գործությունների համար դատապարտվեց կոնստանցիա-
յում յեկեղեցու իշխանների ժողովով, մեղադրվելով 80

կետեղից բաղկացած գարշելի սրբապղծությունների համար ժամանակակից պատմաբանները յենթադրում են, զոր չկա աշխարհի վրա սրբապղծություն, վոր դորձած չիներ Հովհան 22-րդ պապը, Մեղաղբող դատավորներից մեկը մեղաղբական ճառը վերջացրեց հետեւալ խոսքերով, թե «Չի կարելի նայել նրա վրա ուրիշ կերպ, այլ ինչպես վոխերիմ թշնամի լուսոր բարության և անհատականության ծայրահեղին իրավականությունների և խայտառակությունների, պառնիկ և ցոփակյաց, գերազանցած լուսոր պառնիկներից և ցոփակյացներից»: «Նրանք, տասց ճառախոսը, վորոնք գիտեն նրան, կասեն, վոր այդ պապը չար գել եւ ունեցել իր մարմնի մեջ ըուն դրած»: Նրան զրկեցին և զանկեց արին պապական աթոռից և վճռեցին հավիանական աքսոր մի վորեե հեռավոր կղզու վրա և կամ հավաենական բանարկություն՝ քաղաքում: Յերկուսից մեկի ընտրությունը թողին իրեն և ինքը ընտրեց վերջենը: Բայց յերկու տարին չլրացած ազգականները կաշառով արձակել տվին բանտից: Յեզ Մարտին 5-րդ պապը նշանակեց նրան կարդինալ Վատիկանի պապական պալատի և տվից նրան արտօնություն նստելու կարդինալների ժողովներին իր աջ կողմը՝ իբրև նախկին պապ, «Նման զնմանն սիրե», ինքը Մարտին 5 րդ պապն ել նույնն երինչ վոր Հովհան 22-րդ պապը:

Նկարագրել բոլոր պապերի և հոռմեյական յեկեղեցու յերկու կուսակրոն հոգենորականության անքնական պղծագործությունները՝ հատորներ են պետք, ուստի այսքանն ել բավական եմ համարում ընթերցողներին գաղփար կազմելու հոռվիմեյական յեկեղեցու պապերի և զափար կազմելու հոռվիմեյական յեկեղեցու պապերի և յերկու կուսակրոն հոգենորականության այլանդակ և անյերկու կուսակրոն հոգենորականությունների և ընական պղծագործությունների և անառակությունների ընական պարագաների միշտ առաքելական պապատիք չեղած, վոր տեղի չունենար պապերի վատիկածագործություն, վոր տեղի չունենար պապերի վատիկածագործություն, սի առաքելական պալատի և վանքերի պատերի մեջ, սի առաքելական պապների միշտ առաքելական պապների վանքերի մասն վանքորոնք միշտ ել յեղել են պոռնկանոցներ: Կանանց վանքորոնք միշտ ել յեղել են պոռնկանոցներ:

քերի միանձնունի սրբակրօնները ծառայում եյին միմիայն անառակության և ցոփության, բավարարելով վոչ միայն կուսակրոն վանքերին, այլ նաև աշխարհականներին:

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՅԵԿԵՂԵՑԻՆ ՈՏԱՐ Ե

Գանք այժմ հայկական քրիստոնեյական յեկեղեցու կուսակրոն հոգենորականության, Հայ յեկեղեցին կուսակրոն հոգենորականություն չի ունեցել մի քանի զարեր շարունակ: Ամուսնացած եյին Գրիգոր կուսավորիչը և իր վորդիքն ու թոռները, վորոնք հաջորդաբար յեպիսկոպոսապետներ յեղան: Նրանցից հետո՝ նրանց հաջորդող լուսորդ կաթողիկոսներն ու յեպիսկոպոսները ամուսնացած եյին: Հունական և հոռվիմեյական յեկեղեցիներից մատակ մեր հայկական յեկեղեցու մեջ ել կուսակրոնությունը, բայց և այսպես ամուսնացյալ յեպիսկոպոսությունը մեկենիմեկ չփերջացավ, այլ մինչև 10-րդ դարը յեղել են և ամուսնացած և չամուսնացած յեպիսկոպոսներ: Մեր յեկեղեցին չի ունեցել կուսակրոն վարդապետություն, կամ, այսպես ասած, կուսակրոն քահանայություն: Յեպիսկոպոսներ ձեռնադրվել են քահանաներից: Վանքերում բնակող միաբանները յեղել են աղոթող ճգնավորներ, առանց մի վորեե հոգենոր աստիճան ունենալու և ունեցել են վանաց յերեցներ, վորոնք համարվել են վահանայիր: Վանաց յերեցները յեղել են ամուսնացած քահանաներից: Թե յերբանից և սկսվել վանքերի միաբան աղոթող ճգնավորներին քահանայական աստիճան տալը, առանց ամուսնանալու, մեր պատմազրները վոչ մի տեղեկություն չեն տալիս այդ մասին: Միայն յերբ վանքերում դպրությունը ծաղկում եւ և քահանայության մեջ չեն լինում կրթությամբ արժանավոր յեպիսկոպոսական աստիճանի համար, սկսվում ե վանքերի միաբան կուսակրոն քահանաներից (վարդապետներից) յեպիսկոպոսներ ձեռնադրել: Յեպիսկոպոսական ձեռնադրության մաշտոցի



մեջ շատ պարզ յերեսում ե, վոր անապատների և վաճքերի միաբան կուսակրոն քահանաներից արդելված և յեղել յեպիսկոպոս ձեռնազրելլու կաթուղիկոսը յեպիսկոպոսական ձեռնադրության ժամանակ, ի միջի այլ հարցերի, հարց և տալիս նաև խարդավելակին, թե «Չլինի՛ թե անապատական ե և իր ուխտը թողած ե»: Պատասխանը լինում ե՝ «Գոչ»: Շատ պարզ ե ուրեմն, վոր յեպիսկոպոսներ յեղել «Գոչ»: Շատ պարզ է ուրեմն, վոր յեպիսկոպոսներ յեղել ամուսնացած քահանաներից և վոչ վարդապետ կոչեն ամուսնացած քահանաներից և վոչ վարդապետ կոչեն կուսակրոն քահանաներից:

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ԵԶՄԻԱԾՆՈՒՄ

Բայց արդյոք գեթ մեկը կուսակրոն հոգևորականներից, լինի յեպիսկոպոս թե վարդապետ, իբրև բացառություն կարողացել ե մինչև վերջը կուսակրոն մնալ: Վերջն տարիների ընթացքում այնպիսի յերեսութներ են տեղի ունեցել կուսակրոն հոգևորականության կյանքում, վոր վոչ թե աշխարհականների համեստությամբ մեկով են բավականացել կուսակրոնները, այլ մի քանիսով և հաճախ փոփոխելով: Մասնավոր վանքերի վանահայրերը պահել են գեղեցկուհիներ անտես անվան տակ և հաճախ փոփոխել են իրենց անտես սիրուհիներին, ավելի գեղեցկուհիներ ձեռք բերած լինելով: ԲԱՅՑԻ ԴՐԱԱԻՑ ՊԱՀԵԼ, ԵՆ ՆՈՅԵՎ. «ՄՈՒԹ» ԱՆՎԱՆ ՏԱԿ ՏՂԱԱՆԵՐ, ՎՈՐՈՆՑԻՑ ՇԱՏԵՐԸ ԸՆԴՈՒՆՎԵԼ, ԱՆՎԱՆ ՏԱԿ ՏՂԱԱՆԵՐ, ՎՈՐՈՆՑԻՑ ՄԵԶ ՅԵՎ. ԶԵՐՆԱԴՐՎԵԼ, ՎՈՐԵՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՉՄԱՆ ՄԵԶ ՅԵՎ. ԶԵՐՆԱԴՐՎԵԼ, ՎՈՐԵՆ ԴԱՊԵՏ ՅԵՎ. ՆՈՒՑՆԻՍԿ ՅԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԵՎ. ՅԵՎԵԼ, ԵՆ ՆՈՒՑՆԸ ԻՆՉ ՎՈՐ ԻՐԵՆՑ ՀՈԳԵՎՈՐ ԾՆՈՂ ԿՈՉՄԱՌ-ՆԵՐԸ: «ՄՈՒԹ» ԿՈՉՎԱԾ տղաներ պահելու սովորությունը ընդհանրացած ե յեղել ավելի ԽԵՂԱՅԻՆ ՀԱՅՐԻԿԻց առաջ, ՆԵՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԻ հրամանով արդելված ե յեղել Եջմիածնի մայր վաճքում կանանց ել և մուտքը: Խրիմյան Հայրիկը վերին աստիճանի լուսամիտ և աղատախոհ մեծ մարդ կը վերին աստիճանի լուսամիտ և աղատախոհ մեծ մարդ, համամիտ և կողմանակից յեկեղեցու յեթե վոչ արմաեր, համամիտ և կողմանակից յեկեղեցու յեթե վոչ արմատական, գեթ չափավոր բարեկարգության, բայց իր կա-

թուղիկոսության որոք պատահած արկածները և իւ ծերությունը արգելառիթ հանդիսացան իր նպատակը իրագործելուն: Կողմանակից եր նաև կուսակրոնության վերացման, քաջ ըմբռնած լինելով, վոր հնարավորություն չկա կուսակրոնության անբնական կյանքը տանելու: Այնքան աղատամիտ և այնքան լուսամիտ եր, վոր յերբ ամուսնալության գործով և կամ իրրե ուխտավոր կանայք եյին գնում Եջմիածնին, հանաքի ձեռվ, այս և այն վարդապետին կամ յեպիսկոպոսին սովորական եր դարձել ասելու, թե «ՈՒԽՍԱՎՈՐՆԵՐ ԵՆ ՅԵԿԵԼ, ՎՈՐԴԱՊԵՏՆԵՐ ԹՈՂԼՎԱԾՆ»:

Խրիմյան Հայրիկը սիրում եր ձիով շրջել, յերբ մի անգամ ձիով իր հետեւողների հետ գնում ե Եջմիածնապատկան Մարց կոչված անտառը տեսնելու և իջնում ե անտառի կառավարիչ վարդապետի բնակարանը, վարդապետը գնացած ե լինում անտառը շրջելու, վարդապետի ռանդեմականությամբ կոչված սիրուհին ե ընդունում և անմիջապես հայրիկի պահանջած սուրճը պատրաստում: Հայրիկը տեսնելուն պես, հանաքի ձեռվ ասում ե. «Ֆահ, ֆահ, անպիտան վարդապետը աս գեղեցկուհին ուրկե՞ գտեր ե», և հարցըրել ե անտեսուհան. «Քեզի վարդապետը աղեկ կը պահե. ըստ ինձի, վոր ըսեմ իրեն քեզի աղեկ պահե»: Վարդապետը շըրջելուց վերադառնում ե. մանում ե Հայրիկի իշեանած սենյակը, աջն առնելուն պես, Հայրիկը վարդապետին ասում ե. «Անպիտան, աս գեղեցկուհին ուրկե՞ գտեր ես. Եհ, աղեկ լինամե, ձեռքեղ չփախցնես»:

Հայրիկի որոք, ինչպես հիշել եմ վերև, հաճախ ամուսնալության խնդրով թե սարդ և թե կին գալիս եյին Եջմիածնին բաժանվելու արտանություն ստանալու համար, Խինդիրը վորոշվում եր Սինդրով ձայների առավելությամբ, բայց Հայրիկը իրեն եր վերապահում վճռական վորոշումը, Մինողի կուսակրոն անդամները շատ խստությամբ եյին վարդում ամուսնալության խնդիրներում: Մինչև որինական հարգելի պատճառ շինի, թույլ չեյին տալիս վոչ մարդուն և վոչ կնոջը ամուսնանալու: Ապացուցված պոռնըկության գեպքում միայն թույլ եյին տալիս վոչ մե-

դավոր կողմին ամուսնանալու, իսկ մեղավոր կողմին մեր-
ծում եին: Հայրիկը նման փորոշամերով կազմված ո-
րագրները տուանց ստորագրելու կոնդակով եր վերադարձ-
նում Սինոդ, թույլ տալով յերկուսին ևս ամուսնանալու:
Նույնիսկ յերկու ամուսինների մեջ սամանոթյուն և ամե-
լություն յեղած գեղքերում, վորոնց նմանները իսպառ
մերժվում եին սինոդական «սուրբ» հայրերից, Հայրիկը
լուծում եր, առարկելով, վոր «ամուսնոթյունը սիրո
մեջն ե, յերբ յերկուքին մեջ սեր չկա, պետք ե լուծեր
թույլ տալով յերկուսին իրենց սիրածներուն հետ ամուս-
նանալու»: Բոլոր նման դեպքերում յս ինքս, այն ժամա-
նակ Սինոդի անդամ լինելով, համակարձիք եյի լինում
Հայրիկի կարծիքներին և նույն իսկ Հայրիկի վորոշումից
առաջ խնդիրները նախ Սինոդում ընդունված ժամանակ, ին-
քը եյի նույն կարծիքով արտահայտվում միշտ Ամուս-
նալուծության խնդիրներում խստությամբ և անզթու-
թյամբ վերաբերվող «սրբակրոն» և «կուսակլոն» «սուրբ»
հայրերը, վորոնք յաճախակի պատահած ամուսնալու-
ծությունները համարում եյին յեկեղեցու «կարգի ու ո-
րենքի» խախտում, թե իրենց ապօրինի կենակցություն-
ները և յաճախ իրենց հետ կենակցող կանանց իրենցից
բաժանելը, վոր ամուսնալուծության պես մի յերեսոյթ
եր, և ուրիշների հետ կենակցելը, ինչպես եյին հաշտեց-
նում իրենց խղճի հետ, այդ ել իրենց գիտենալու բանն
եր, վորքան ել աշխատում եյին ծածկապես պահել իրենց
պոռնկական և ցոփական կենցաղը, բայց ծածուկ չեր
մնում, Շատ ճիշտ և ասել Քրիստոս, թե «Զիք ինչ ծա-
ծուկ, վոր վոչ հայտնեցի և գաղտնի, վոր վոչ ծանիցի»:
Վաղարշապատցիք իմանում եյին այն ամենը, ինչ վոր
կատարվում եր վանքի ներսը: Բայց վաղարշապատցիք
մատների արանքով եյին նայում կնապահներին. թեկուզ
հենց հաճախ վոփոխելու գեղքերում. Բայց թե դուրսը
և թե ներսը իրենց աներում խոսակցության առարկան
լինում եր վանականների ցոփակեցությունը, յս հաճախ

լսել եմ վաղարշապատցիներից, թե «Ահղեր, ԳՈՆԵ Ա-
ՄԵՆ ՄԵԿԸ ՊՈՀԻ ԻՐ ՀԱՄԱՐ ՄԵԿԸ, ԱՌԱՆՑ ՀԱՃԱԽ
ՓՈԽԵԼՈՒ ԱՎԵԼԻ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ ԳՏՆԵՌՈՒ ԴԵՊՔՈՒՄ,
ՅԵՎ ԳՈՆԵ ՄՈՒԹԵՐ ՊԱՀԵԼՈՒՑ ԶԵՌՔ ՎԵՐՑՆԵՆ: ՆԵՐ-
ԿԱՅՈՒՄ ԵԼ ԵՇՄԻԱԾՆԻ ԺԻՄԱՆՆԵՐԻց վնրը կարող է
ձեռքը խղճի վրա դնել և ասել, վոր ինքը կուսակրոն եւ
Ամենքն ել ունեն թե ներսը վանքում և թե գուրաը զյու-
ղում: Յեպիսկոպոսներից մեկը մի տարվա ընթացքում
չորս կույս տղջիկ և միմյանց հետեւից ունեցել վորքերից:
Մեկին մի քանի ամիս պահելուց հետո ամուսնացրել ե,
ի հարկե նրանից ավելի գեղեցկուհին դանելու զեղքում և
այսպես հաջորդաբար չօրսը մի տարում: Մոտ 60 տարե-
կան հասակից անց կուսակրոնը՝ 16–17 տարեկան կույս
տղջկերը և պահել և վերջերն ել ասում եյին վաղարշա-
պատցիք՝ մի նորն և սկսել փնտրել և դարձյալ ջահել
կույս տղջիկ: Սա ինչ խայտառակություն ե, ինչով են
պակաս հայոց յեկեղեցու կուսակրոնները Հռովմեյական
յեկեղեցու կուսակրոններից: Խեղճ ժողովուրդ, լուս կեր-
պով տանում ե, բավականանալով միայն դուրսը բամբա-
սելով: Պետք վերջ տալ այս խայտառակություններին թե
վոչ: Յես ամեններն չեմ մեղադրում այդ մարդկանց կնա-
պահության համար, այլ մեղադրանքի լի ու լի արժանի
յեն, վոր իմանալով հանգերձ, վոր կուսակրոնությունը
անբնական կյանք ե, և չեն կարող յերբեք կուսակրոն
մալ իրենց ամբողջ կյանքի ընթացքում, կրկնում եմ,
այդ բոլորն իմանալով հանգերձ, 1917 թ. Եշմիածնում
կայացրած ժողովում, առանց խղճահարվելու և ամաշելու,
կուսակրոնության վերակենդանացման և ընդարձակման
ու զորացման խնդիր դրին իրենք կուսակրոնները:

Յեպիսկոպոսներից մեկն ել Ռուսաստանից եր բերել
մի սիրուհի և գյուղում մի սենյակ վարձել սիրուհու հա-
մար: Յելբեմն ինքը յեպիսկոպոսն եր գիշերներն իր սիրու-
հու մոտ անցկացնում և յերեմն սիրուհին վանքում յե-
պիսկոպոսի մոտ: ԻնՉՊԵՍ ՀԻՇԵԼ ԵՄ ՓՈՔԻ ԻՆՉ ԱՌԱՋ,

ՎԱՆԱԿԱՍՆԵՐԻ «ՄՈՒԹԵՐԻՑ» ՇԱՏԵՐԸ ՅԵՂԵԼ ԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԵԿ ՆՈՒՅՆ ԻՍԿ ՅԵՊԻՄԿՈՊՈՍ. Այդպիսիներից այժմ մի յեպիսկոպոս կա Եջմիածին, վորը մօնթի դեր ե կատարել իր ժամանակին մի վանականի մոտ: Ներկա միաբաններից միայն մեկը պահում ե մի կին, իբր իրեն հարազատ և որինական կին: Ինչո՞ւ պետք ե թույլ շարվի այդ վարդապետին պսակվելու և դարձյալ վարդապետ մնալու և նույն իսկ յեպիսկոպոսանալու: Այդ վարդապետը ապրում ե դուրսը գյուղում: Նրան գյուղացիք չեն բամբասում, վորովհետև գիտեն, վոր պահում ե իրեն համար իրեն հարազատ կին, և որինական ե համարում վարդապետը իր արածը: Իր մոտ գնացողներին ծանոթացներով կնոջը, հայտնում ե բացարձակապետ, վոր իր կինն ե, ծածուկ չի պահում և վոչ ել միտք ունի փոխելու մյուսների նման: Փափագում ե ամուսնանալ և մնալ դարձյալ վարդապետ, ինչպես ամուսնացած բահանաները, վորովհետև սիրահար ե վարդապետության և ընդունակ և շնորհալի քարոզիչ ել ե: սիսալված չեմ լինի ասելու, վոր Եջմիածնի միաբանների մեջ միակ պերճախոս քարոզիչն ե: Բայց այդ վարդապետին վանական իշխանությունը հարկադրում ե թողնել կնոջը և գնալ վանքը, վորպեսզի պաշտոն տրվի իրեն, իսկ այդ հարկադրուները բոլորն ել պահում են ծածկապես սիրունիներ: Գովեստների արժանի յեմ համարում իր համար մի կին պահող և պահած կնոջը որինական համարող և ամուսնանալու ցանկություն ունեցող այդ վարդապետին:

ՊԵՏՔ Ե ՎԵՐԱՑՆԵԼ «ԿՈՒԽԱՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ» ՄԵՐ ՅԵԿԵՂԵՑՈՒՑ

Նման մի դեպք ել պատահել ե 19. թղ դարու սկզբներում: 1823 թ. Սուրբիայի կողմերը կրոնական շարժում ե սկսվում: Դիոնիսիոս անվամբ մի յեպիսկոպոս Պեյրութցի, ջերմ կերպով կողմանից և աշխատող յեկեղեցու բարեկարգության համար, յերկար ձանապարհորդություններ և կատարում Փոքր Ասիայում, մտքեր պատրաստելու համար: Գնում ե նաև Զմյուռնիա, վորտեղի

ժողովրդին շատ հետաքրքրական ե դառնում Դիոնիսիոս յեպիսկոպոսի ամուսնացած և զավակների հայր լինելը, վորովհետև թե կինը և թե իր վորդիքը իր հետն են լինում: Տեղական առաջնորդական փոխանորդ վարդապետը հակառակ ե լինում յեկեղեցու բարեկարգության գաղափարին: Մի քանի անգամ առիթ ե ունենում վիճելու Դիոնիսիոս յեպիսկոպոսի հետ մասնավորապես բարձրագույն կարգի նկատմամբ և պահանջ եր դնում իմանալու, թե ինչ իրավունք և ում արտօնությամբ ե ամուսնացել մնալով դարձյալ նույն յեպիսկոպոսական կոչման մեջ: Դիոնիսիոս յեպիսկոպոսը՝ բավական չը համարելով իր խղճի և համոզմունքի վրա հիմնվելը, առաջ ե բերում նաև առաքելական պատվերը, թե՝ «պարտ ե յեպիսկոպոսին միո կնոջ այր լինել», և թե իր ամուսնանալու և թե ամուրիների համար ասում է դարձյալ առաքելական խոսքը, թե՝ «պատվական ե ամուսնություն և սուրբ են անկողինք», և թե «լավ ե ամուսնանալ, քան ջեռնուլ», ավելացնելով նաև Քրիստոսի խոսքը, թե՝ «վոր կարողն ե տանել տարցի»: Բայց Առաջնորդական Տեղապահը, վորը թերևս ինքը ազատ չի լինում բոլորի նման ապորեն կնապահությունից և հաճախակի պահածներին փափոխելուց, սկսում է ժողովրդին զրգուել յեպիսկոպոսի գեմ: Քիչ ժամանակից հետո յեպիսկոպոսը Առաջնորդական Տեղապահի գրդմամբ իր գեմ հարուցված հակառակությունից խուսափելով, վերադառնում է Պեյրութ իր նախկին բնակավայրը, վորտեղի ժողովուրդը արգեն ընտելացած ե լինում կուսակրոնության վերացման գաղափարին: Թե Դիոնիսիոս յեպիսկոպոսը որտեղ ե ամուսնացած լինում և քահանաներից ով ե լինում ամուսնացնողը՝ հայտնի չե: Միայն կարծվում ե, վոր կամ ստարագդի մի բողոքական հովիվ և կամ ավետարանական մի հայ յերեց պատկած կլինի:

Ներկա անկրոնության շարժումներից ամենաառաջնակարգը արդյոք կուսակրոնության կեղծ կենցաղը չէ և

նաև յեկեղեցու Քրիստոսի վարդապետության վորուց հեռացած լինելը, Մեր ներկա պետության թե բարձր և ստորին պաշտոնյաններից ամենից մեծագույն մասը ձեմարանականներն են, վորոնք բոլորն ել ծամոթ են Եջմիածնի կուսակրոն-սրբակրոնների կյանքին և կենցաղին: Հայաստանում, ամեն -մի քայլափոխում հիսաքանչ և հոյակապ վանքեր կան, վորոնց շուրջը իր ժամանակին միքանի հարյուր միաբան կուսակրոններ սաղմոս քաղելով և որական յոթն անգամ ժամերգություն կատարելով են իրենց ամրող կյանքը անցկացրել: Վորքան անհաշիվ սրբազդություններ կատարած կը լինեն իրենց խցերում այդ սաղմոս քաղող և որական յոթն անգամ ժամերգություն կատարողները: Վորքանը դրանցից զղացած և հուսահատված կը լինեն այդ անբնական կյանքի մեջ մտնելու համար, բայց ձրիակերության և ծուլության վարժված և հասակներն ել առած, հարկադրված են լինում մնալու վանքերում, սովորական պղծագործությունները շարունակելով:

Այդ անբնական կյանքի մեջ մտնողներից և զղացողներից մեկի վերա յեւ դարձնում ընթերցողների ուշագրությունը: Զատկական տոններին, յերբ ամեն կողմերից և ամեն ազգերից ուխտավորներ են թափվում Յերուսաղեմ, ուխտավորների բազմալեզու և այլազան քրիստոնեական դավանանքներ ունեցող Ս. Հարության տաճարում խոնգած ժողովրդի ներկայությամբ, հոգևորականներին հատուկ կանգնելու դասում, մի յերիտասարդ կուսակրոն նորընծառ վարդապետ, իր ուխտագնացության հենց առաջին իրիկուն ժամերգության ժամանակ, անշուշտ հիասթափված թե վանական սրբակրոնների վարած կյանքից և թե ուխտավորների արտաքին ձեւական սնութիւնապահական յերկրպագություններից, արտատվում եւ և հոգու խորքից մընչում եւ ասելով: — «Ուր ես իջած, նախնի առաքելական դարերի անբիծ և անարատ քրիստոնեական, ինչ կեղծիքների և պատրանքների տակ տոններություն, ինչ կեղծիքներից իմ հորդորներին և

են շպարած քեզ մարդ եակները: Դարերի ընթացքում քոպաշտոնյաները իրենց քմահաճույքով աղավաղել են քո հիմնադիր Քրիստոսի վարդապետությունը, շեղելով իր ճշտությունից, մաքրությունից և պարզությունից:

Առաջին անգամ չեն նման խոսքեր լսելու, այլ առիթ եմ ունեցել շատ աննշան և չնչին բացառություն կազմող հիասթափված կուսակրոններից լսելու: Վերոհիշյալ նորընծա կուսակրոն վարդապետի ամենամտերիմ ընկերը, վորը խորհուրդ տալիս չե յեղել իրեն այդ անբնական կյանքի մեջ մտնելու, տեսնելով և իմանալով նորընծա կուսակրոն վարդապետի խոսակցությունից զղջումը կյանքի այդ ճանապարհն ընտրելու համար, հետևյալ խոսքերն եւ ուղղում կուսակրոնին իր ամենամտերիմ աշխարհական ընկերը: — «Այնքան անոելի յե թվում ձեր և ձեր նմանների ընտրած վիճակը, վոր սոսկումով և խանդաղատ զգացումով և հետևում սիրտս ձեզ: Աչքիս առաջ լուսապատկերի արագ թափալումով անցնում են կուսակրոնների ճակատների վրա դրոշմակած մայրենի համբույրները, յերբ մասուկ եյին դեռ, Դժբախտաբար նրանցից մի քանիսը դասակից ընկերներս են յեղած: Մաղկավետ պատանեկության շավիղը միասին ենք կծկած և բյուրավոր լուսաշող յերազներ հյուսելով, պատմած ենք միմյանց մեր առաջին հույզերը, Յերբեմն բռնկած սրտի պատմություններ ենք հաղորդած իրարու: արցունքների կաթիլներ ցողցողելով փլված յերազների վերա: Մի որ ել նրանցից վոմանք, վորոնցից մեկն եք և դուք, հանկարծ բաժանեցիք ձեր ճանապարհը, մտնելով կուսակրոնության անբնական վիճակի մեջ, թողնելով աշխարհի բողբոջալից աստվածանան և մարդապայել կյանքը, շըլսելով իմ հորդորներին և թախանձալից խնդիրներին»:

Ամեն կողմից լսվում են ձայներ, վոր հայոց յեկեղեցին հարգելու յե իրեկ կապ՝ աշխարհիս ամեն կողմերը ցըված հայության միության, մինչ յեկեղեցու վարդապետությունները, արարողությունները և կղերականները հայտնապես ծաղրվում են և այլանվում: Ուրեմն ինչպէս կա՞նչի յե արգելել անհավատության տարածվելը

ժողովրդի մեջ, կարելի չե աըգելել անհավատությունը, դա-
տապարտելով այն և հակառակելով նրան և զոչ ել փա-
կելու յե հոգեվորականությունն իր աշքերը նրա գեմ՝ ան-
տարբեր մնալով, կղերականները կարող են մեծապես նը-
պաստել անհավատությունը չեղոքացնելուն իրենց վա-
րուց և բարուց մաքրությամբ, բարեպաշտությամբ և ան-
խոնջ աշխատությամբ հոգուտ ժողովրդյան, յեռանդուն
կերպով փույթ տանելով ազգի կրօնական և բարոյական
դաստիարակության, յեկեղեցու բեմից հնչեցնելով Ավե-
տարանի վարդապետության քարոզի ձայնը, Բայց քրիս-
տոնեյական կրօնը սովորեցնելու յե այնպես, ինչպես սո-
վորեցրին Քրիստոս և առաքյալները:

Յեվ անա այն իսկ քրիստոնեյական կրօնը համաձայն
կը լինի Ս. Գրքին, Աստծո կենդանի և ուղիղ բանին և գի-
տության: Ուրեմն հայոց յեկեղեցու թե բարձր և ստորին
հոգեորականությունը թող աշխատեն սորվեցնել Ավետա-
րանի ճշմարիտ և կինարար սկզբունքները, ցույց տալով
բուն իրենց վարուց և բարուց մեջ Քրիստոսի ճշմարիտ
պատկերն ու հոգին, և անա այն ժամանակ ժողովրդի ա-
պագան պետք ելինի պայծառ և փառավոր:

Յեվ յերբ վարուց և բարուց մաքրության խնդիր կա,
կուսակրոնները չեն կարող յերբեք վարուց և բարուց
մաքրություն ունենալ: Հայոց յեկեղեցու նշանավոր սուրբ
հայրերից, հայտնի մատենագիր և պատմաբան Յեզնիկ
Կողբացին ասում ե, թե՝ «յեթե յերիտասարդ կրօնավոր
հոգս յելանիցե, մի հավատար»: Ուր եր, թե կուսակրոն
բարձր հոգեորականությունը ընդունակ լիներ ըմբռնելու,
գոր կուսակրոնության վերացումով և միևնույն ժամանակ
յեկեղեցին ավելորդապաշտություններից և սնութիապաշ-
տություններից մաքրելով և իր նախկին առաքելական
դարու պարզության վերածելով, կանգուն կը մնա յեկեղե-
ցին և հայ ժողովուրդը աստվածային զիտությամբ կր-
բարձրանա և կրբարգավոճի: Ուրեմն, վերջ «կուսակրո-
նության», վերջ պաշտոնական պոռնկության և ցոփու-
թյան մեր յեկեղեցում:



ԳԻՒՆ Ե ՏՕ ԿՈՂ